

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան

«~~10~~» 10 2011թ.

«Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ համալսարան), ի դեմս ռեկտոր Ռուզաննա Չակոբյանի, մի կողմից, և ՀՀ ԱԻՆ Չայաստանի Հիդրոօդերութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ «Չայպետհիդրոմետ»), ի դեմս տնօրեն Լևոն Վարդանյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ կողմեր) ղեկավարվելով իրենց կանոնադրություններով և ՀՀ գործող օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱԼ

1.1. Սույն պայմանագրով կողմերը համագործակցում են Չամալսարանի Բնագիտական ֆակուլտետի «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությունների ուսուցումը բազմակողմանի խորացնելու ուղղությամբ:

1.2. Կողմերն իրականացնում են գիտագործնական և ուսումնակրթական բնագավառներում դասախոսությունների, գործնական պարապմունքների, ուսումնական պրակտիկայի, սեմինարների և գիտաժողովների անցկացում:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. «Չամալսարանը» պարտավորվում է՝

2.1.1. Աջակցել «Չայպետհիդրոմետին» երիտասարդ մասնագետներով համալրելու գործին:

2.1.2. Աջակցել «Չայպետհիդրոմետի» համագործակցության շրջանակներում ձևավորված գիտական հոդվածների հրատարակման աշխատանքներին:

2.1.3. Ապահովել ուսումնական պրակտիկայի ընթացքում համալսարանի դասախոսների, խմբերի ղեկավարների և ուսանողների կարգապահությունը՝ «Չայպետհիդրոմետի» ներքին կարգապահական կանոններին համապատասխան:

2.2. «Չայպետհիդրոմետը» պարտավորվում է՝

2.2.1. Աշխարհագրություն, Բնապահպանություն և բնօգտագործում մասնագիտությամբ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների

ուսումնական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպում, հանդիպումներ անվանի գիտնականների հետ:

2.2.2. Տրամադրել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման համար անհրաժեշտ նյութեր:

2.2.3. Ապահովել համալսարանի դասախոսների և ուսանողների մուտքը Հայպետհիդրոմետի տարածք:

### 3. Կողմերի ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Կողմերի մասնագետները կարող են մասնակցել ուսանողների ուսումնական գործընթացին, ինպես նաև համալսարանի մասնագիտական պետական քննական հանձնաժողովի կազմում ավարտական աշխատանքների պաշտպանությանը:

3.2. Ցանկացած պահի լուծել պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### 4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 տարի ժամկետով:

4.2. Պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարաձգված հերթական տարով, եթե կողմերը իրար չեն դիմել պայմանագիրը լուծելու կամ պայմանագրում փոփոխություններ կատարելու առաջարկով:

4.3. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարվում են անհատույց:

4.4. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազամը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5. Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել երկրորդ կողմին առանց կողմերի գրավոր համաձայնության:

4.6. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ պայմանագիրը փոփոխելու կամ լրացնելու մասին համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

4.7. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

4.8. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից՝ որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՀՀ ԱԻՆ  
«Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ

ք.Երևան, Լեռ 54  
հեռ. /010/ 53 32 71  
Ֆաքս /010/ 53 29 58

տնօրեն Լ. Գարդանյան  
(ստորագրություն)

Կ.Տ.



ՀՀ  
«Գավառի պետական համալսարան»  
ՊՈԱԿ

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ,  
Ազատություն 1  
հեռ./010/ 28 20 75 -0264/ 2 57 75  
Էլ. կայք [www.gsu.am](http://www.gsu.am)  
Էլ. փոստ՝ [info@gsu.am](mailto:info@gsu.am)

ռեկտոր Ռ. Հակոբյան  
(ստորագրություն)

Կ.Տ.

